

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ Ու ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան

27 հունվարի, 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ջոն Կարապետյանի

(կազմակերպության անվանումը)

(անուն ազգանուն)

(այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում»

(ծրագրի անվանումը)

ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 93938.5 հազ. գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները.

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. ՀՀ ԳԱԱ կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց.

2.2.4. ՀՀ ԳԱԱ գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը.

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ.

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում.

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ.

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ.

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ՝ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ.

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. ՀՀ ԳԱԱ կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ ՀՀ ԳԱԱ կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 93938500 (իննսուներեք միլիոն ինը հարյուր երեսուսուր հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
(թվերով և բառերով)

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 86423420 (ութսունվեց միլիոն չորս հարյուր քսաներեք հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ, որն ըստ
(թվերով և բառերով)

եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե

միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

- ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,
- բ. Առաջադրանքը (հավելված 1),
- գ. Օրացուցային պլանը (հավելված 2),
- դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),
- ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100

ՀՎՀՀ 00005673

Նախագահ Մարտիրոսյան



ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպություն

(կազմակերպության անվանումը)

ք.Գյումրի, Վազգեն Սարգսյանի 5

(հասցե)

«Կոնվերս բանկ» Կումայրի մ/ճ Հ/հ1930049591960100 ՀՎՀՀ 05504455

(բանկային վավերապայմանը)

Տնօրեն՝ Ջոն Կարապետյան

(անուն ազգանուն)



ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում»

ծրագրի

(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը

Իրականացնել գիտական հետազոտություններ, որոնք նպատակաուղղված են ՀՀ տարածքի երկրակեղևի կառուցվածքի ուսումնասիրմանը, էներգետիկ և հանքային ռեսուրսների որոնման, հետախուզման երկրաֆիզիկական մեթոդների զարգացմանը, սեյսմիկականության և երկրաշարժերի կանխագուշակման հիմնախնդիրների լուծմանը, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմոկայունության տեսության մեթոդների կատարելագործմանը, երկրաֆիզիկական նոր սարքերի նախագծմանը և նրանց փոքրածավալ արտադրությանը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

Իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան գիտական հետազոտություններ, որոնք կնպաստեն էներգետիկ, հանքարդյունաբերական, բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, հանրապետության ազգաբնակչության սեյսմիկ պաշտպանության ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ծրագրի իրականացմանը:

Աշխատանքին ներկայացվող կարևոր պահանջներից է նրա կատարումը ՀՀ ԳԱԱ կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան, ինչպես նաև ստացված արդյունքների հանձնումը սահմանված ժամկետում:

4. Աշխատանքի բովանդակությունը

Հիմնարար գիտական հետազոտությունների ծրագրի շրջանակներում ինստիտուտը երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության և երկրաֆիզիկական սարքաշինության բնագավառներում 2015 թվականին որպես գիտական գործունեության հիմնական ուղղություններ նախատեսում է երկրակեղևի կառուցվածքի և նրանում ընթացող երկրադինամիկ պրոցեսների ուսումնասիրությունները, օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման և երկրաբնապահպանական, ռիսկի գնահատման, երկրաֆիզիկական մեթոդների կատարելագործումը, Երկրի մագնիսական դաշտի և նրա վարիացիաների ուսումնասիրությունը, սեյսմաբանական մեթոդներով Հայաստանի տարածքի երկրակեղևի լարվածադեֆորմացիոն վիճակի և տարածաշրջանի երկրաշարժերի օջախների հետազոտումը, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների, շենքերի և կառույցների սեյսմակայունության տեսության կատարելագործումը և երկրաֆիզիկական նոր սարքերի մշակումը:

Նշված ուղղություններով նախատեսվող ուսումնասիրությունների արդիականությունը պայմանավորված է Հայաստանի հանրապետության տնտեսության զարգացմանը նպաստող այնպիսի կարևորագույն խնդիրների լուծմամբ, ինչպիսիք են Հայաստանի տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի, երկրաբնապահպանական իրավիճակի գնահատումը, կործանարար և ուժեղ երկրաշարժերի ուսումնասիրությունը և կանխագնահատումը, հանքահումքային բազայի ընդլայնումը, երկրաէներգետիկ նոր պաշարների որոնումը, սեյսմակայուն շինարարության տեսական հիմքերի կատարելագործումը, երկրաֆիզիկական սարքաշինության հայրենական արտադրության կազմակերպումը:

Ըստ նշված գիտական հիմնական ուղղությունների և բնագավառների 2015 թվականին նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

Երկրաֆիզիկայի ոլորտում

- ✓ ՀՀ տարածքի երկրակեղևի վերին շերտի կառուցվածքի ճշգրտում, բյուրեղային հիմքի ճշգրտված գրավիտացիոն մոդելի և ժամանակակից ռելիեֆի ձևակառուցվածքների համեմատական վերլուծության միջոցով դրանց առանձնահատկությունների և ընդհանուր օրինաչափությունների պարզաբանում:

- ✓ Երկրակեղևում սեյսմիկ ալիքների տարածման արագությունների և ապարների խտությունների միջև բացահայտված էմպիրիկ կապերի վերլուծություն և ՀՀ տարածքի խորքային երկարաբանական կառուցվածքին համապատասխան էմպիրիկ կապի ընտրություն:
- ✓ Հայաստանի տարածքում սեյսմաբանական դիտարկումների գործող համակարգի ելակետային տվյալների հուսալիության գնահատման ալգորիթմների մշակում: Ջերմային, գրավիտացիոն և մագնիսական դաշտերի անոմալիաների տարածական բաշխվածությունների առանձնահատկությունների միջև եղած օրինաչափությունների ուսումնասիրում:
- ✓ Հայկական լեռնաշխարհում 1900-2015թթ. տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի / $M > 5.0$ / տարածաժամանակային վերլուծության հիման վրա տարանջատել տարածաշրջանի հիմնական սեյսմածին գոտիների ակտիվացված սեզմենտները:
- ✓ Վանի 2011 թվականի / $M > 7.2$ / և Ահարի 2012 թվականի / $M > 6.4$ / երկրաշարժերի օջախային գոտիներում գործող սեյսմատեկտոնական լարումների ուղղվածությունների որոշում և նրանց ինտենսիվության գնահատում:
- ✓ Վանա լճի շրջանում տեղի ունեցած կործանարար երկրաշարժերի /1976թ. և 2011թթ./ / նախացնցումային պրոցեսների առանձնահատկությունների հետազոտում, Ահարի 2012 թվականի ուժեղ երկրաշարժի հետցնցումային պրոցեսի տարածաժամանակային զարգացման ուսումնասիրում:
- ✓ Սպիտակի օջախային գոտում տարբեր մագնիտուդաներով տեղի ունեցած երկրաշարժերի գործիքային գրանցումների սեյսմիկ կողաների սպեկտրալ վերլուծություն:
- ✓ Իրագործել Հարավային Հայաստանի ընթացիկ սեյսմիկ ակտիվության մոնիտորինգ ստացիոնար սեյսմիկ կայանների 2010-2015թթ. տվյալների բազայի հիման վրա:
- ✓ Գլխավոր երկրամագնիսական դաշտի և նրա առաջին երեք ժամանակային ածանցյալների դաշտերի տարածական սֆերիկ-հարմոնիկ մոդելների կառուցումը 20-րդ դարի ակզբից մինչև 21-րդ դարի առաջին տասնամյակն ընդգրկող ժամանակահատվածի համար, ելնելով երկրամագնիսական վարիացիաներում իրար հաջորդող ջերքերի վերաբերյալ հիպոտեզից:
- ✓ ՀՀ տարածքի մագնիսական դիտարկումների տվյալների շարքերում երկրամագնիսական վարիացիաների անոմալիաների անջատման մշակված մեթոդի

կիրառմամբ լուրջ ու ռեզիոնալ մասշտաբի երկրամագնիսական անոմալիաների, տեկտոնական լարումների դաշտի և տարածքի սեյսմիկայնության միջև փոխադարձ առնչությունների առանձնահատկությունների հետազոտում:

- ✓ Մագնիսաառաձգականության եռաչափ խնդիրների հիմնարար լուծումները:
- ✓ Հայաստանի տարածքի երկրակեղևի որոշակի երկրաբանական կառուցվածքների պետրոմագնիսական, հնէամագնիսական ամփոփ սանդղակների կազմում
- ✓ Պոլինձ-մոլիբդենային հանքավայրերի (Թեղուտ) ռենտգենա-ռադիոչափական նմուշարկման մեթոդի մշակումը երկարակյաց Am-241 ռադիոակտիվ իզոտոպի կիրառմամբ:
- ✓ Մշակել Հանքաձորի պղնձի հանքավայրի եռաչափ ֆիզիկա- երկրաբանական մոդելը՝ համալիր երկրաֆիզիկական մեթոդների կիրառման և ստացված տվյալների մեկնաբանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- ✓ Գնահատել Հայաստանի բազամետաղ հանքավայրերում (Արմանիս) ստացված երկրաֆիզիկական տարբեր պարամետրերի միջև ռեգրեսիոն կապերի բնույթը և ներկայացնել նրանց կախվածության հավասարումները:
- ✓ Մշակել և կազմել Գյումրի քաղաքի ռադոնային աղտոտվածության 1:25000 մասշտաբի քարտեզը:
- ✓ Հիդրոերկրադինամիկական հետազոտությունների իրականացում հիդրոգեոդեֆորմացիոն գործընթացների ուսումնասիրման և դրանց զարգացման օրինաչափությունների ճշգրտման նպատակով:

Ինժեներային սեյսմաբանություն, սեյսմակայուն շինարարություն, երկրաֆիզիկական սարքաշինություն բնագավառներում

Երկարաժամկետ (2015-2020թթ.) գիտական ծրագրի՝ ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության տեսության ու պրակտիկայի և երկրաֆիզիկական սարքաշինության գծով իրականացվող խնդիրների արդիականությունը և նրանց հիմնավորումը պայմանավորված է ներքոհիշյալ կարևոր հիմնախնդիրների լուծմամբ.

I ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների կատարելագործում:

II Սեյսմակայունության տեսության և մեթոդիկայի կատարելագործումը՝ հաշվի առնելով շենքերի և կառուցվածքների կոնստրուկցիաների իրական աշխատանքը և հիմնատակի դեֆորմացիոն առանձնահատկությունները:

III Սեյսմիկ սանդղակների կատարելագործում:

IV Երկրաֆիզիկական սարքաշինություն:

Դուրս գալով գիտական հետազոտությունների ծրագրի նախանշված ուղղություններից, 2015 թվականին նախատեսվում է իրականացնել.

առաջին հիմնախնդրի շրջանակում՝

- ✓ Իրականացնել հետազոտություններ իդենտիկ հիպոկենտրոնային հեռավորություններում գտնվող փափուկ և կոշտ գրունտների վրա կատարված միաժամանակյա գրանցումների միջոցով նրանց վարքի գնահատման վերլուծություն:
- ✓ Հավաքել, սիստեմավորել և վերլուծել նախորդ տարիներին լոկալ տարածքներում և կառույցների վրա կատարված գործիքային դիտարկումներից ստացված նյութերը, համադրելով դրանք, այդ նույն տարածքներում առկա ինժեներա-երկրաբանական նյութերի հետ, բացահայտելու համար նրանց միջև գոյություն ունեցող ֆունկցիոնալ կապը:
- ✓ Ինժեներական կառույցների (ջրամբարների պատվարներ) վրա գործիքային դիտարկումների իրականացում, պարզելու համար նրանցում տեղի ունեցող վտանգավոր երկրադինամիկ պրոցեսների զարգացումները:
- ✓ Գյումրի քաղաքի ինժեներա-երկրաբանական և սեյսմիկ միկրոշրջանացման նյութերի հիման վրա ինժեներա-սեյսմաչափական կայանների տեղանքների և համապատասխան կառույցների ընտրություն կայանների տեղակայման համար:
- ✓ Տեղակայվող կայանների տեխնիկական չափորոշիչների ընտրություն և որոշում:

Երկրորդ հիմնախնդրի շրջանակում՝

- ✓ Շենքերի և կոռույցների ճկման տատանումների նոր խնդրի դրվածքի ձևակերպում:
- ✓ Գյումրի քաղաքում գոյություն ունեցող տարբեր տիպի շենքերի և կառույցների հաշվառում, դասակարգում, հետազոտում, ստացված արդյունքների վերլուծություն և գնահատում:
- ✓ ՀՀ շինարարական (քաղաքացիական) համալիրը կազմող շենքերի և շինությունների դասակարգում, իրական խոցելիության գնահատում (Գյումրի քաղաքի օրինակով):

- ✓ Փորձարարական եղանակով տարբեր տիպի շենքերի և կառույցների դինամիկ պարամետրերի որոշում

Երրորդ հիմնախնդրի շրջանակում՝

- ✓ Գոյություն ունեցող և գործնականում կիրառվող սեյսմիկ սանդղակների համեմատական վերլուծություն:
- ✓ Դիտարկել MSK-64 սանդղակի (և սանդղակների այլ տիպերի) կիրարկության խնդիրը ազգային-ավանդական ճարտարապետաշինարարական առանձնահատկությունների պայմաններում (տարածքային մակրոսեյսմիկ սանդղակի ստեղծման ծրագրի շրջանակում):

չորրորդ հիմնախնդրի շրջանակում՝

- ✓ Գոյություն ունեցող հորիզոնական և ուղղաձիգ տատանողական հարթակների համակարգչային ծրագրի կազմում նոր սերնդի համակարգիչների հետ աշխատելու նպատակով:
- ✓ Գոյություն ունեցող ուղղաձիգ հարթակի սեղանի հավասարակշռման հանգույցի նախագծում, պատրաստում և փորձարկում:
- ✓ Դյուրակիր ուղղաձիգ տատանողական հարթակների նախագծման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և որոշակի հանգույցների նախագծում:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը՝ ընթացիկ հաշվետվություն:



S. Kea

(ստորագրություն)

Ջոն Կարապետյան

(անուն ազգանուն)

ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի

(ծրագրի անվանումը)

№ ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	Անվանումը	Համառոտ բովանդակություն	Կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	Գիտամեթոդական, գիտատեխնիկական և գիտակիրառական ուսումնասիրությունների իրականացում, համեմատական վերլուծություն,	Մեթոդական հարցերի մշակում, գիտակիրառական մեթոդների մշակում, համեմատական վերլուծություն	Մեթոդների համեմատական գնահատում, ստացված տվյալների համակարգում և ներկայացում	Որակական և քանակական առնչությունների ներկայացում, մեթոդական, վիճակագրական մշակումներ և վերլուծություններ, քարտեզներ, գրաֆիկներ, կորեր և այլն	Հունիս	10272620
2	Տեսական, գիտագործնական, հետազոտություններ, մոդելներ, ռեժիմային դիտարկումների իրականացում	Գիտակիրառական, գիտամեթոդական աշխատանքներ	Մեթոդիկաների կատարելագործում, ստացված տվյալների ուսումնասիրում, դրված խնդիրների լուծում (շարունակական)	Դիտարկումների արդյունքների վերլուծություն, մեկնաբանում, գիտական, գիտակիրառական նոր մոտեցումների առաջարկում	Նոյեմբեր	64347872
3	Քարտեզների տարբերակների կազմում, լաբորատոր-փորձարարական հետազոտություններ	Հաշվարկային ալգորիթմների ստեղծում, քարտեզների թվայնացում, լաբորատոր փորձարկումների իրականացում	Հաշվարկների իրականացում, հավասարումների ստացում, քարտեզների տարբերակների կազմում	Հանքային ռեսուրսների որոնման, երկրաբնապահպանական, սեյսմիկ անվտանգության ապահովմանը նպատակաուղղված գիտական, գիտակիրառական առաջարկների ձևակերպում, գնահատում	Մեպտեմբեր	11212005
4	Կատարված աշխատանքների, հետազոտությունների և ստացված արդյունքների ամփոփում				Դեկտեմբեր	939338500

Ընդամենը

939338500

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և (կազմակերպության անվանումը) ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ



Ստորագրող՝ Ռ. Մարտիրոսյան

(Ստորագրություն)
Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Տնօրեն՝ Ջոն Կարապետյան

(ստորագրություն)

Հավելված 3
«Ճ» հունվար 2015թ.
N 7-9 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

«Հայաստանի տարածքի խորքային կառուցվածքի, սեյսմիկականության, սեյսմիկ վտանգի գնահատման, հանքային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների ու սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի

(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Սարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն

(կազմակերպության անվանումը)

Ջոն Կարապետյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել

(անուն ազգանուն)

«Ճ» հունվար 2015թ. N 7-9 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 93938500 (իննսուններեք միլիոն ինը հարյուր երեսունուրեք հազար հինգ հարյուր) (թվերով և բառերով)

ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպություն

(կազմակերպության անվանումը)

ք. Երևան, Սարշալ Բաղրամյան 24

ք. Գյումրի, Վազգեն Սարգսյանի 5 (հասցե)

Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100

«Կոնվերս բանկ» Կումայրի մ/ճ Հ/հ 1930049591960100 ՀՎՀՀ 05504455

(բանկային վավերապայմանը)

ՀՎՀՀ 00005673

Տնօրեն՝ Ջոն Կարապետյան

(անուն ազգանուն)



Հավելված 4
 27 » հունվար 2015թ.
 № 6-9 պայմանագրի

Գիտական ծրագրի նախահաշիվ

NN ը/կ	Ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ	74868.9	14973.8	18717.2	18717.2	22460.7
2	տնտեսական և այլ ծախսեր	19069.6	3813.9	4767.4	4767.4	5720.9
3	Ընդամենը	93938.5	18787.7	23484.6	23484.6	28181.6

Տնօրեն՝



 (ստորագրություն)

(Ջոն Կարապետյան)
 (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝

(ստորագրություն)

(Օտարիկ Հովհաննիսյան)
 (անուն ազգանուն)

